

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱԿԻՉ-ՂՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ընդունված է  
24 նոյեմբերի 2015 թ.

Հոդված 1. «Հակիչ-ղրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 22-ի ՀՕ-129-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի «2016 թվականի հունվարի 1-ը» բառերը փոխարինել «2017 թվականի հունվարի 1-ը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի երրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 11.1-ին հոդվածի 2-րդ մասից հանել «, հաշվանցումը» բառը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի:

Սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Սույն օրենքի 2-րդ հոդվածը կիրառվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո կազմված ստուգման ակտով առաջադրված տուգանքների նկատմամբ, իսկ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը նշանակված և նշանակման օրվանից երկամսյա ժամկետում չվճարված (կամ մասնակի չվճարված) տուգանքների գումարները կրկնապատկվում են մինչև 2018 թվականի հունվարի 1-ը գործող Օրենքին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության  
Նախագահ

Ս. Սարգսյան

15 դեկտեմբերի 2015 թ.  
Երևան  
ՀՕ-161-Ն